# *«ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 13 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ*

2023-2024թթ.

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

«12»07.2022թ. N 1275-Ա/2 հրամանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ «Հրազդանի թիվ 13 ՆՈՒՀ»
Կազմակերպաիրավական տեսակը՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
Սեփականության ձևը՝ անհատույց օգտագործման
Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Հարավային թաղամաս, Ռ. Միքայելյան 6
Հեռ.՝ (093) 93-99-10
Պաշտոնական կայքէջ՝ hrazdan.am

## 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից. | այո | | |
| բ. Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար. | այո | | |
| գ.արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին. | այո | | |
| դ. Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից. | այո | | |
| ե. Ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ. | այո | | |

«ա», «բ» չափանիշների համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը: «ե» չափանիշի համար պետք է հիմք ընդունել հաստատության կողմից համապատասխան կազմակերպությունների (ախտահարման-կանխարգելման, արտակարգ իրավիճակների ծառայության) հետ

կնքված պայմանագրերը: Սույն աղյուսակը լրացնելիս ներքևում պետք է նշվի նաև համապատասխան փաստաթղթերի առկայության և գործողության ժամկետների, այդ թվում՝ պայմանագրերի կատարման մասին:

<u>**Ըստ «ա» և «բ» կետերի՝ դիտարկումը կատարվել է: Հաստատության շենքը և հարակից տարածքը ցանկապատված է և անվտանգ է երեխաների ազատ տեղաշարժման համար:**</u>

<u>**«Ե» կետի պահանջներին համապատասխան՝ հաստատությունն ամեն տարի պայմանագիր է կնքում «Հրազդանի կանխարգելիչ ախտահանում» ԴՓԲԸ կազմակերպության հետ, որի հիման վրա կատարվում են կանխարգելիչ միջոցառումներ կրծողների դեմ:**</u>

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանովսահմանված ՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը)

| Ցուցանիշ | Այո | Մասամբ | Ոչ |
|---|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է. | | մասամբ | |
| բ.ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահա-գործման անվտանգության նորմերին. | այո | | |
| գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր. | այո | | |
| դ.ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով. | այո | | |
| ե.շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցողսաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն). | | մասամբ | |
| զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության | այո | | |

| | | | |
|---|---|---|---|
| լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով. | | | |
| է. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին. | այո | | |
| ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին. | այո | | |
| թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը. | այո | | |
| ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին. | այո | | |
| ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր. | | | ոչ |
| ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է. | այո | | |
| ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները. | այո | | |
| ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով. | այո | | |
| ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով. | այո | | |
| ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին. | այո | | |
| ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին. | այո | | |

«ա»-ից «դ» չափանիշները դիտարկելով՝ հանձնաժողովն ազատ շարադրանքով պետք է նկարագրի հաստատության տարածքի, շենքի ու շինությունների, գույքի անվտանգ շահագործման, սաների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները:

Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը պետք է նկարագրի առկա իրավիճակը և արձանագրի բացահայտված շեղումներն ու անհամապատասխանությունները: Դիտարկում-փաստագրումն իրականացնելիս հաստատությունը պետք է առաջնորդվի համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով:

«ա» չափանիշի համար անհրաժետ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը ու նշել, թե ինչպիսի վերանորոգման կարիք ունի այն՝ կապիտալ, մասնակի կամ ընթացիկ: Այնուհետև ցանկալի է մանրամասնել վերանորոգման կարիքները և տալ դրանց մոտավոր ֆինանսական գնահատականը:

«բ» չափանիշի համար դիտարկում-փաստագրման միջոցով պետք է արձանագրել, թե արդյոք շենքը կայուն է հետևյալ վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ (ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն):

«ժբ»- ից «ժե» չափանիշների համար ևս պետք է իրականացնել դիտարկում-փաստագրում և հաջորդիվ անդրադառնալ սաների և աշխատողների տարհանման խնդիրներին: Կցել տարահանման պլանի լուսապատճենը:

<u>Դիտարկելով «ա»-ից «դ» չափանիշները՝ հաստատության շենքը մասնակի վերանորոգված է, սակայն ունի օդափոխության համակարգի ձեռքբերման, ինչպես նաև խմբասենյակներում առանձնացված խոհանոցային մաս ստեղծելու կարիք:</u>

<u>Հաստատության շենքը համապատասխանում է անվտանգության նորմերին, սողանքի վտանգ չկա, առկա է տարհանման պլան: Պարբերաբար իրականացվում են մասնակի վերանորոգումներ:</u>

# Տարհանման պլան
# մ.մանկապարտեզ N13
# 1հարկ



## Տարհանման պլան
## 2 հարկ



«ժզ» չափանիշի համար կցել լիցենզիայի լուսապատճենը և լրացնել ստորև բերված աղյուսակ

| Խմբասենյակ | Խմբասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| 1 խումբ | 94.70 մ$^2$ | 3.8 մ$^2$ | 3.4 մ$^2$ |
| 2խումբ | 93.34 մ$^2$ | 3.7մ$^2$ | 3.5 մ$^2$ |
| 3խումբ | 94.33 մ$^2$ | 3.8 մ$^2$ | 3.4 մ$^2$ |
| 4խումբ | 90.62 մ$^2$ | 4.5 մ$^2$ | 0.5 մ$^2$ |
| 5խումբ | 92.62 մ$^2$ | 3.6 մ$^2$ | 3.4 մ$^2$ |
| 6խումբ | 92.47 մ$^2$ | 3.6 մ$^2$ | 3.4 մ$^2$ |
| 7խումբ | 91.40 մ$^2$ | 3.6 մ$^2$ | 3.6 մ$^2$ |
| 8խումբ | 95.40 մ$^2$ | 3.9 մ$^2$ | 3.3 մ$^2$ |
| 9խումբ | 66.54 մ$^2$ | 3.3 մ$^2$ | 1.7 մ$^2$ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ **Ա** **N** **0898**

Սույնով վավերացվում է, որ

**«ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 13 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ**

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, ք. Հրազդան, Հարավային թաղամաս Միքայելյան փողոց 6

(գտնվելու վայրը)

ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, ք. Հրազդան, Հարավային թաղամաս Միքայելյան փողոց 6

(գործունեության իրականացման վայրը)

**Իրավունք ունի իրականացնելու**

**նախադպրոցական կրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ ________ *Ժ. Անդրեասյան*

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

15 *հունվարի* 2024 թ.

*Անժամկետ*

(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՍԵՐԻԱ ՆԽԴ N 000188

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ե Ր Դ Ի Ր N 001**

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

**ՍԵՐԻԱ Ա N 0898 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ**

**«ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 13 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ**

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «15» հունվարի 2024 թվականի N 27-Ա/2 հրամանին համապատասխան իրավունք ունի կրթական գործունեություն իրականացնել հետևյալ պայմաններով.

| N | Կրթական ծրագիրը | Հաստա-տության տեսակը | Տարիքային խմբերը | Համա-կազմի սահ-մանային թիվը | Ուսուց-ման լեզուն | Ուսուցման տևողու-թյունը | Կրթու-թյան ձևը | Հասարակական շինությունների նպատակային նշանակությանը համապա-տասխան ուսումնական հաստատության նվազագույն տարածքը (քմ, սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Նախա-դպրոցա-կան | Մսուր-մանկա-պարտեզ | Կրտսեր 1-ին խումբ<br>Կրտսեր 2-րդ խումբ<br>Միջին խումբ<br>Ավագ խումբ | 40<br>60<br>90<br>60 | Գրական հայերեն | 1 տարի | Առկա | Անհատույց օգտագործմամբ՝<br>2094.23 քմ |

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության պետ՝

(ստորագրություն)

Կ.Տ.

Ա. Արշակյան
(Անուն, ազգանուն)

15 հունվարի 2024թ.
(Ամիս, ամսաթիվ)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում:

Վերլուծել խմբասենյակում մեկ սանին բաժին ընկնող մակերեսին վերաբերող իրավիճակը, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

**<u>Բոլոր խմբասենյակները վերանորոգված են, յուրաքանչյուր սանին բաժին է ընկնում միջինում 3.7մ² տարածք, յուրաքանչյուր սան ունի իր հանգստի համար նախատեսված տարածքը:</u>**

















2023-2024թթ. ուստարվա ընթացքում վերանորոգվել է «Հրազդանի թիվ 13 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի խոհանոցն ու լվացքատունը:







## 3. ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին. | այո | |
| բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերիվերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին. | այո | |
| գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ. | այո | |
| դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիականպաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան. | այո | |
| ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լրկալ ջեռուցման անվտանգ համակարգով. | այո | |
| զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանովսահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով. | այո | |
| թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ | այո | |

| | | |
|---|---|---|
| ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն). | այո | |
| ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը. | | ոչ |
| ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին. | այո | |
| ժգ.ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ. | այո | |
| ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն. | այո | |

Այս 14 չափանիշների ամբողջությունը հիմք է հանդիսանում հաստատության ինքնավերլուծության հաշվետվության այս բաժինը կազմելու համար: Առավել ընդգրկուն և համակողմանի վերլուծություն կատարելու համար յուրաքանչյուր չափանիշին պետք է անդրադառնալ առանձին, այնուհետև՝ ընդհանրացնել դրանք: Այս բաժնի վերլուծությունը կատարելիս պետք է ոչ միայն ուսումնասիրել համապատասխան ներքին փաստաթղթերի առկայությունը կամ կատարել դիտարկում-փաստագրում ըստ առանձին ցուցանիշների, այլ նաև հարցումներ կարելի է կատարել նաև ծնողների կամ այլ շահառուների շրջանում:

«գ» և «դ» չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները գրանցվում են ստորև բերված աղյուսակում.

| Ամսաթիվը | Խումբը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը | Մասնակից սաների և աշխատակիցների թիվը |
|---|---|---|---|
| Հոկտեմբեր | անձնակազմ | Ծնողական ժողով արտակարգ իրավիչակներում արագ գործելու վերաբերյալ<br><br>Օդային տագնապ | 30 աշխատակից |
| Նոյեմբեր | Ծնողական համայնք | Ծնողական ժողով արտակարգ իրավիչակներում արագ գործելու վերաբերյալ<br><br>Օդային տագնապ | 60 մասնակից |

| | | | |
|---|---|---|---|
| Պարբերաբար | Անձնակազմ<br>Բոլոր տարիքային խմբեր | Տարհանման վարժանքներ | Մոտ 160 սան |

«ժդ» չափանիշի դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հաստատությունում առկա է բուժկետ | | | | | | |
| Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը) | | | | | | |
| Այո | | | Ոչ | | | |
| Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ) | Բուժաշխատողներ (թիվը նրանց պաշտոնները) | Բուժկետում առկագույքը | Բուժկետը վերանորոգված է, թե ոչ. | | Բուժկետի սանիտարական անվիճակը | Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը |
| Հաստատության 1-ին հարկ 25.68 մ$^2$ | 1 բուժքույր | Ջերմաչափ, կշեռք,հասակաչափտոնոմետր,թախտ, առաջին օգնության անհրաժեշտ դեղորայք | Այո | Ոչ | Գերազանց | Առկա է |








2013



Ինքնավերլուծության այս բաժնի կարևորագույն բաղադրիչն է հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանի վերլուծությունը: Նման պլանի առկայությունը, ինչպես նաև դրանում նշված աղետներին պատրաստվածության, հակազդման իրատեսական մեխանիզմների ու միջոցառումների նկարագրությունը հաստատության անվտանգության և ապահովության կարևոր չափանիշներից է: Այս չափանիշին հաստատության համապատասխանության գնահատման նպատակով պետք է նշել, թե արդյոք հաստատությունը մշակել և հաստատել է իր քաղաքացիական պաշտպանության պլանը, ինչպես է իրագործվում այդ պլանը, ինչպես նաև նկարագրել քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սաների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների մասին: Կարևոր է նաև հիշատակել, թե արդյոք նախադպրոցական ուսումնական հաստատությունը վարում է իրականացվող վարժանքների և միջոցառումների գրանցամատյան:

Ելնելով դիտարկման 14 կետերի պահանջներից՝ հաստատության շենքը և տարածքը համապատասխանում է սահմանված չափանիշներին: Հաստատությունն ունի վարժանքների և միջոցառումների գրանցամատյան:

Մանկապարտեզն ունի քաղպաշտպանության պլան, որտեղ առկա են արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը և իրականացումը: Այն ներառում է առաջին օգնության կազմակերպում, հրդեհաշիջում, ինչպես նաև տարհանում, աջակցում և այլ անհրաժեշտ գործողությունների կազմակերպում: Արտակարգ իրավիճակների վերաբերյալ և նման իրավիճակներում կողմնորոշվելու, վարքի դրսևորմանը երեխաները սովորում են խաղերի և զրույցների միջոցով:

Հավելված N 1
«Հրազդանի թիվ 13 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրենի
«28» օգոստոսի 2023թ. N 36-Լ հրամանի

**Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը, աշխատակարգը և գործառույթները**

1. **Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը.**

**1) ԱՌԿ խորհրդի ղեկավար կազմը՝**

ա. խորհրդի ղեկավար՝ Շ. Զոհրաբյան /նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն/,

բ. խորհրդի ղեկավարի տեղակալ - տարահանման և պատսպարման կազմակերպման ղեկավար պատասխանատու՝ Ա. Առաքելյան /ՆՈՒՀ-ի մեթոդիստ/,

գ. խորհրդի քարտուղար՝ Լ.Գրիգորյան /գործավար/,

**2) ԱՌԿ ոլորտի պատասխանատուների կազմը՝**

ա. ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատու՝ Լ. Ավետիսյան /տնտեսվար/,

բ. տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Մ. Սիմոնյան /ֆիզ. հրահանգիչ/

գ. հրդեհային անվտանգության պատասխանատու ՝Լ. Ադամյան /պահեստապետ/ և Ս.Ստեփանյան /պահակ/,

դ. առաջին օգնության պատասխանատու ՝ Կ. Եսայան /բուժքույր/,

ե. առաջին հոգեբանական աջակցության պատասխանատու՝ Ս. Մանուկյան /դաստիարակ/,

**3) ԱՌԿ խորհրդի կազմը՝**

ա. Ա. Այվազյան /դաստիարակ/,

բ. Լ. Փիլոյան /դաստիարակ/,

գ. Ա. Գրիգորյան /դաստիարակ/,

դ. Լ. Հովհաննիսյան /դաստիարակ/,

ե. Լ. Ավետիսյան /տնտեսվար/,

զ. Ս. Պրազյան /խոհարար/,

է. Ս. Ստեփանյան /պահակ/

ը. Տաթևիկ Առաքելյան /ծնողական խորհրդի նախագահ/:

**2. Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգ.**

1) սույն աշխատակարգով (այսուհետ՝ Աշխատակարգ) սահմանվում են ԱՌԿ խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը.

2) ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են ՆՈՒՀ-ում.

3) ԱՌԿ խորհուրդը նիստ է հրավիրում տարեկան առնվազն երկու անգամ՝ առաջին նիստը (նշել ամիս՝ առաջին կիսամյակի ընթացքում), երկրորդը՝ (նշել ամիս՝ երկրորդ կիսամյակի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

4) ԱՌԿ խորհրդի արտահերթ նիստ հրավիրվում է ըստ անհրաժեշտության, ԱՌԿ խորհրդի ղեկավարի կամ ԱՌԿ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով.

5) ԱՌԿ խորհրդի բոլոր նիստերը արձանագրվում են.

6) ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և ԱՌԿ խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը, իրականացվում է ԱՌԿ պլանի կատարման մոնիթորինգ.

7) ԱՌԿ պլանի մոնիթորինգի տվյալները հրապարակվում են ՆՈՒՀ-ի կայքում.

8) ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները:

9) ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող բաժինների համար, ինչպես նաև ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար.

10) ԱՌԿ խորհրդի նիստերի արձանագրությունները կցվում են ԱՌԿ պլանին:

**3. ԱՌԿ խորհրդի հիմնական գործառույթներն են.**

1) ապահովել ՆՈՒՀ-ի անձնակազմի, երեխաների, շենք-շինության, գույքի պաշտպանությունը՝ արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման դեպքում.

2) ապահովել ԱՌԿ պլանի մշակման, հաստատման, կիրարկման, վերահսկման և ժամանակին վերանայման աշխատանքները.

3) ապահովել ոլորտային պատասխանատուների, անձնակազմի և երեխաների տեսական ու գործնական գիտելիքների ուսուցումը և ներգրավումը ԱՌԿ միջոցառումների կազմակերպման ու իրականացման աշխատանքներում.

4) զարգացնել արտակարգ իրավիճակներին և աղետներին դիմակայելու կարողությունները.

5) ապահովել անձնակազմի և երեխաների պաշտպանությանն ուղղված համակարգերի և սարքավորումների արդյունավետ և անխափան աշխատանքը.

6) ապահովել ոլորտային պատասխանատուների աղետների ռիսկի նվազեցմանն ու արտակարգ իրավիճակների արձագանքմանն ուղղված աշխատանքները.

7) ապահովել անձնակազմի և երեխաների համար անվտանգության վարքականոնների և պարտականությունների մշակումը և դրանց կիրառումը՝ արտակարգ իրավիճակներում.

8) ապահովել ՆՈՒՀ-ի շենքերին ու հարակից տարածքներին սպառնացող վտանգների և խոցելիության բացահայտման ու դրանց նվազեցմանն ուղղված աշխատանքների պլանավորումն ու իրականացումը.

9) կազմակերպել գործնական պարապմունքների նախապատրաստման և անցկացման աշխատանքները,

10) կազմակերպել աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների արձագանքման կարիքների գնահատման աշխատանքները,

11) որոշել աղետների ռիսկի կառավարման ընթացիկ միջոցառումների առաջնահերթությունները.

12) ապահովել արտակարգ իրավիճակներում տուժածների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծումը.

13) կազմակերպել և իրականացնել արտակարգ իրավիճակներում անձնակազմի և երեխաների պատսպարում, տարահանում և անհատական պաշտպանության միջոցներով ապահովում.

14) ապահովել այլ ՆՈՒՀ-երի և արձագանքող ստորաբաժանումների հետ համագործակցությունը.

15) օժանդակել որոնողափրկարարական ստորաբաժանումներին՝ մարդկանց կյանքի փրկության և առողջության պահպանման հարցերում.

16) ապահովել արտակարգ իրավիճակներում այլ ՆՈՒՀ-երի երեխաների ընդունումը՝ առավելագույն ծանրաբեռնվածությամբ.

17) ապահովել  անձնակազմի և երեխաների անհատական պաշտպանության միջոցների կուտակումը, թարմացումը և անհրաժեշտության դեպքում բաշխումը,

18) իրականացնել հրդեհների կանխարգելում և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

19) կուտակել, թարմացնել և պահել աշխատունակ վիճակում հրդեհաշիջման միջոցները,

20) կազմակերպել արտակարգ իրավիճակներում անձնակազմին և երեխաներին առաջին  օգնության և հոգեբանական առաջին օգնության տրամադրումը,

21) պարբերաբար իրականացվող գործնական պարապմունքների միջոցով ապահովել առաջին օգնության և հոգեբանական առաջին օգնության պատրաստվածության բարձր մակարդակը և գործողությունների փոխկապակցվածությունը,

22) ՆՈՒՀ-ին սպառնացող վտանգներից և շենքային պայմաններից ելնելով՝ կազմել պատսպարման սխեման, իրականացնել պատսպարման հաշվարկները, քայլեր ձեռնարկել ՆՈՒՀ-ի այլ տարածքները պատսպարման համար կիրառելի դարձնելու ուղղությամբ (կիսանկուղային հարկերի ու այլ շինությունների հարմարեցում պատսպարման համար, հարմարեցումների ժամանակ հաշվի է առնվում նաև ՆՈՒՀ-ում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաների բոլոր առանձնահատկությունները),

23) կազմակերպել անձնակազմի և երեխաների կենսաապահովումը՝ խոշոր աղետների դեպքում.

24) ապահովել անձնակազմի, երեխաների, շենք-շինության, գույքի պաշտպանությանն ուղղված միջոցների կուտակումը, թարմացումը և պահումը աշխատունակ վիճակում:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Գործնական պարապմունքի ղեկավար՝

ՆՈՒՀ տնօրեն Զոհրաբյան

«28» մարտի 2024թ.

ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 13 ՆՈՒՀ» - ՈՒՄ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

**Թեմա՝** «Հրդեհաշիջման կազմակերպում»

**Նպատակը՝**

1) ստուգել ՆՈՒՀ-ի անձնակազմի, ոլորտային պատասխանատուների պատրաստվածությունը,

2) անձնակազմի տեսական և գործնական գիտելիքների կիրառումը ստեղծված իրավիճակում,

3) արտակարգ իրավիճակներում արձագանքող ուժերի և համայնքապետարանի հետ փոխգործակցության արդյունավետության բարձրացումը,

4) արտակարգ իրավիճակների կանխարգելման կարողությունների կատարելագործումը:

**Գործնական պարապմունքին ներգրավվում են՝** Տնօրեն, հրդեհային անվտանգության պատասխանատուներ, բուժքույր, ՆՈՒՀ-ի անձնակազմ և սաներ

**Տևողությունը՝** 30 րոպե

**Անցկացման վայրը՝** «Հրազդանի թիվ 13 ՆՈՒՀ» ՀՈԱԿ,

**Նյութատեխնիկական ապահովումը՝** առկա է

**Անցկացման օրը՝** «26» մարտի 2024թ.

## ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

| Հ/Հ | ԺԱՄԸ | ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
|---|---|---|---|---|
| 1. | 10:00-10:01 | Ազդարարման կազմակերպում | Զանգահարում է հրշեջ ծառայություն (911 կամ 112) ՆՈՒՀ – ի անձնակազմին տեղյակ է պահում հրդեհի մասին | ՆՈՒՀ-ի աշխատակիցներից մեկը հայտնաբերելով հրդեհ՝ շտապ իրականացնում է ազդարարում (բղավելով՝ հրդե՛հ, հրդե՛հ, հրդե՛հ), անմիջապես հայտնում է տնօրենին, հրդեհային անվտանգության պատասխանատուին |
| 2. | 10:01-10:04 | Տարահանման կազմակերպում | Հրահանգում է հնարավորին չափ մոտ գտնվել հատակին, քթի և բերանի մոտ պահել խոնավ գործվածք | Դաստիարակները լսելով ազդարարման ձայնը՝վերցնելով հաշվառման մատյանները, շատ արագ իրականացնում են երեխաների տարահանում՝ ըստ տարահանման պլանների, հաշվի առնելով հրդեհի ծագման վայրը |
| 3. | 10:04-10:09 | Տարահանումից հետո երեխաների հաշվառում | Հրահանգում է ստուգել երեխաների առկայությունը՝ ըստ խմբերի անվանացանկերի | Երեխաներին տարահանելուց հետո, տարահանման հավաքատեղիում ըստ մատյաների ստուգում են երեխաների առկայությունը, որի վերաբերյալ անմիջապես զեկուցվում է տնօրենին |
| 4. | 10:09-10:15 | Տարհանումից հետո առաջնային հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպում | Ղեկավարում է հրդեհաշիջման աշխատանքները, կազմակերպում է էլեկտրամատակարարման համակարգի անջատումը, ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատուին հանձնարարել դիմավորել հրշեջ-փրկարարներին | Տարհանումից հետո աշխատակիցները կազմակերպում են հրդեհաշիջման աշխատանքներ, մինչև հրշեջ ծառայության ժամանումը |
| 5. | 10:15-10:20 | Անձնակազմի և սաների տարհանումից հետո | Կազմակերպում է նյութական արժեքների տարհանումը | Կազմակերպում են նյութական արժեքների տարհանումը վտանգավոր գոտուց, որոշում են դրանց պահեստավորման վայրերը և անհրաժեշտության դեպքում ապահովում հսկումը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | 10:20 -10:25 | Անվտանգության ապահովում | Հանձնարարել բուժքրոջը կատարել զննություն, անհրաժեշտության դեպքում կանչել բժշկական և այլ ծառայություններ | Անհրաժեշտության դեպքում բուժքույրը ցուցաբերում է առաջին օգնություն, հանգստացնում է տուժածին, առաջին օգնություն ցուցաբերելուն զուգահեռ իրականացնում է հոգեբանական օգնություն |
| 7. | 10:25-10:30 | Մինչև հրդեհաշիջում սկսելը<br><br>ՀԾ ժամանելուն պես | Հրահանգում է պահպանել անվտանգության կանոնները<br><br>Հայտնում է հրդեհի աղբյուրի, կատարված աշխատանքի մասին | Չներգրավված աշխատակիցներին տարհանում են հրդեհի վայրից<br><br>Աշխատակիցները փակում են բոլոր դռներն ու պատուհանները<br><br>Ապահովում են հրդեհաշիջմանն մասնակցող մարդկանց անվտանգությունը |

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Պլանում առկա են գործողությունների ընթացակարգեր: Դրանք են՝

. Ազդարարում, իրազեկում, տարհանում

. Վիրավորների բացահայտում

. Կենսապահովություն, հոգեբանական աջակցություն

Կից՝ նկարներ:







## 4. ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

| Ցուցանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ. | այո | |
| բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատաս-խանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման,ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ. | այո | |

Այս չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

| Ամսաթիվը | Խումբը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը | Մասնակիցների թիվը |
|---|---|---|---|
| 24.08.2023թ. | Մանկավարժական խորհուրդ | Մանկավարժական խորհրդի I նիստ | 16 մասնակից |
| 26.08.2023թ. | Անձնակազմ<br><br>Ծնողական համայնք | 2023-2024թթ. ուստարվա աշխատանքների իրազեկում | 70 մասնակից |
| 25.12.2023թ. | Մանկավարժական խորհուրդ | Մանկավարժական խորհրդի II նիստ | 15 մանկավարժ |
| 29.01.2024թ | Մանկավարժական խորհուրդ | Մանկավարժական խորհրդի արտահերթ նիստ | 15 մասնակից |
| 16.04.2024թ. | Մանկավարժական | Մանկավարժական խորհրդի | 15 մասնակից |

| | | | |
|---|---|---|---|
| | խորհուրդ | III նիստ | |
| 28.06.2024թ. | Մանկավարժական խորհուրդ | Մանկավարժական խորհրդի III նիստ | 16 մասնակից |

## 5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

| Ցուցանիշը | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը | 14 | 15 | 15 | |
| Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը կամ դրույքաչափը | Շաբաթա-կան 40 ժամ | Շաբաթա-կան 40 ժամ | Շաբաթա-կան 40 ժամ | |

Վերլուծել մանկավարժական աշխատողների թվաքանակի, միջին ծանրաբեռնվածության փոփոխության պատճառները, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

<u>**Հաստատության 1 դրույքաչափով ֆիզկուլտուրայի հրահանգչի դրույքաչափը 2024 թվականի հունվար ամսից ավելացել է 0.25 դրույքով՝ դառնալով 1.25 դրույք:**</u>

| Պաշտոնը | Անունը, ազգանունը, հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը | Տվյալ հաստատությու-նում աշխատելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
